Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-493-17.01.2023-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 3-րդ մասը «լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է հինգ տարի ժամկետով:» բառերից հետո լրացնել ~~«Դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, բժշկական օգնության եւ սպասարկման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են հինգ տարի ժամկետով:»~~ նախադասությունը: «Դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են հինգ տարի ժամկետով, իսկ տրամադրված լիցենզիաների ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է հինգ տարի ժամկետով:» նախադասությունը:

Հոդված 2. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:
2. ~~Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեղերի արտադրության, դեղերի մեծածախ իրացման, դեղատնային գործունեության, բժշկական օգնության եւ սպասարկման իրականացման համար լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների գործողության ժամկետը հինգ կամ ավել տարի է, ենթակա են նորից լիցենզավորման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հետեւյալ ժամկետներում՝ դեղերի արտադրության, դեղերի մեծածախ իրացման, Երեւան քաղաքում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երկու տարվա ընթացքում, Երեւան քաղաքում բժշկական օգնության եւ սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ վեց ամսվա ընթացքում, Երեւան քաղաքում բժշկական օգնության եւ սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ մեկ տարվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության եւ սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երկու տարվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության եւ սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ տասնութ ամսվա ընթացքում, մարզերում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երեք տարվա ընթացքում: Այն լիցենզավորված անձինք, որոնց տրամադրված լիցենզիաների գործողության ժամկետը սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պակաս է հինգ տարուց, հինգ տարին լրանալու դեպքում ենթակա են նորից լիցենզավորման ընդհանուր հիմունքներով:~~

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեղերի արտադրության, դեղերի մեծածախ իրացման, դեղատնային գործունեության, բժշկական օգնության եւ սպասարկման իրականացման համար լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների գործողության ժամկետը հինգ կամ ավել տարի է, ենթակա են նորից լիցենզավորման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հետեւյալ ժամկետներում՝ դեղերի արտադրության, դեղերի մեծածախ իրացման, Երեւան քաղաքում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երկու տարվա ընթացքում, Երեւան քաղաքում բժշկական օգնության եւ սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ վեց ամսվա ընթացքում, Երեւան քաղաքում բժշկական օգնության եւ սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ մեկ տարվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության եւ սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երկու տարվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության եւ սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ տասնութ ամսվա ընթացքում, մարզերում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երեք տարվա ընթացքում: Այն լիցենզավորված անձինք, որոնց տրամադրված լիցենզիաների գործողության ժամկետը սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պակաս է հինգ տարուց, հինգ տարին լրանալու դեպքում ենթակա են նորից լիցենզավորման ընդհանուր հիմունքներով:

~~3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում եւ ժամկետներում համապատասխան լիցենզավորված անձանց կողմից նորից լիցենզավորման համար չդիմելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը:~~

3. Սույն հոդվածով սահմանված ժամկետներում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզավորված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից հինգ տարի առաջ իրենց տրամադրված լիցենզիաների գործողությունը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետներում չդադարեցնելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը: